ՍԻԶԻՖՅԱՆ ՍԱՅԼԸ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ (ՄԵՂԱՇՐՋՄԱՆ) ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

Եվ հանկարծ բոլորը տեսան (չնայած որոշ մասը չտեսնելու տվեց), որ դա ընդամենը զառիվերով ծանր բարձրացող, ճռճռան մի սայլ էր: (Ինչպես հայտնի հեքիաթում, երբ երեխայի դասական բացականչությունից հետո բոլորը հանկարծ տեսան, որ թագավորը մերկ է, այլ ոչ թե նոր, չտեսնված զգեստով պաճուճված: Ըստ երևույթին, թագավորը միշտ էլ խափշիկ էր՝ զարդարված սիրամարգի փետուրներով): Այսպես, ուրեմն, հանկարծ բոլորը տեսան, որ դա ընդամենը մի ահռելի ճռճռան սայլ էր, որ ծանր բարձրանում էր զառիվերով, այլ ոչ թե սուրացող ճեպընթաց կամ հրթիռ: Անիվները կարմիր էին՝ օղագոտիների վրա լերդացած արյան հետքեր: Առատ խոստումներով ծանրաբեռ սայլը հազիվ էր տեղաշարժվում, խոր ակոսներ թողնելով հողի կրծքին, անհատների, ժողովուրդների, ազգերի ճակատագրերի վրա: Ծանր լուծը ցավացնելու աստիճան ճմլում էր նիհար եզների ուսը, որոնք պրկելով վերջին մկանները, պլշած աչքերով նայում էին կոմունիզմի ճանաչափայլ հեռուներին, իսկ բուռն, երկարատև ծափահարությունների մտրակը շաչում էր նրանց գլուխների վրա:

Բայց վերելքը շատ էր դիք, իսկ ծանր սայլը ետընթաց, սիզիֆյան միտումներ ուներ, ու եղավ մի պահ, որ պտտական մոմենտն այլևս բացասական արժեք ըստացավ, ու եզներն անում էին դիմակայելու թիկունքի ձորի ձգողությանը: Բուռն ծափահարությունները ստիպված դադարել էին, որպեսզի օղագոտու տակ մի քար դնեն: Բայց պարզվեց, որ դա քար չէր, այլ ճիմ, խորհրդային հայրենասիրության ուռճացած ճումբը, ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության փչուն ճումբը, հանրապետությունների անխախտ դաշինքի կորակապ ճումբը: Ու սայլը մի պահ կանգ առավ:

Բայց դա երկար չտևեց: Ապրիլյան բարակ, խոստումնալից անձրևից փափկած ճումբը, չդիմանալով կարմիր անիվի բիրտ ճնշմանը, տեղի տվեց, խորհրդային հայրենասիրության ճումբը, ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության ճումբը, հանրապետությունների անխախտ դաշինքի ճումբը ճմլվեց, փշուր-փշուր եղավ: Ու սայլը, հետզհետե թափ վերցնելով, անճարակ եզների վիզը ոլորելով, գահավիժեց ցած:

Մի պահ ազատության հովերը սողոսկեցին հոծ զանգվածների շարքերը, նրանց օժտելով բացասման զորեղ եռանդով: Եվ ինչքան էլ սայլապանները բարբաջեին ազգայնամոլության ու ծայրահեղականության մասին, չէին կարող կասեցնել անձնական ազատության ծարավն ու ազգային միասնության միջոցով այն ձեռք բերելու ձգտումը: Ուստի քաջ գիտակցելով կարմիր անիվի ետընթաց շարժման օրինաչափությունները, նրանք ջանում էին անիվը ակոսի մեջ պահել, ուղղելով ղարաբաղյան ընդվզման վրա: Առանց այն էլ խորն էին սայլի թողած արնածոր ակոսները, ու նույն ակոսներով, նույն անհատների ժառանգների ու ժողովուրդների սերունդների ճակատագրերի վրայով նա անխուսափելիորեն պետք է շարժվեր դեպի լենինիզմի մշուշապատ ակունքները: Ու այդպես էլ եղավ: Նույն կարմիր անիվը, որ շարժման ելակետից ակոսել, տարանջատել էր հայ ժողովրդի անմխիթար բախտը, նույն անողորմությամբ ակոսը լցրեց արյան առուներով: Այսպես բոլշևիկյան ոճրագործությունների ցուցակում ավելացան սումգայիթ, կիրովաբադ, բաքու, ասպարեզ եկան հերթական բորենիները՝ սաֆոնովներ, պոլյանիչկոներ...

Բայց սրանք խամաճիկներ են միայն: Պատմությունը, իր բոլոր ողբերգական իրադարձություններով հանդերձ, միշտ բաղկացած է «հերոսների», առանձին առաջնորդ անհատների անուններից, արարքներից ու ճակատագրերից: Կոմունիզմի իրական բոլոր քայլերը ոչ մի ազնվություն չեն բովանդակում: Լենինի կարմիր ահաբեկչությունը, ախտավոր, աթաթուրքամետ ինտերնացիոնալիզմը, Ստալինի արյունարբու բռնակալությունը, փչալարային սոցիալիզմը, հայրենական մեծ սպանդը, մուժիկ Խրուշչովի տեսատնտեսական ձեռնածությունները, Իլյիչ-երկրորդ Բրեժնևի սպառազինությունների և շքանշանազինությունների սնանկավազքը, ճահճահոտ հեյդարակաշառապաշտությունը, Գորբաչովի մանվածապատ լարախաղացությունը, «ադրբեջանամետ պարիտետի» կլանային սկզբունքը,— երկիրը հասցրել են «օստոմանյան տարբերակի» եզրին, երբ ընդունայն «Խորհրդային Սոցիալիստականը» պատրաստ է տրոհվելու կենտրոնախույս, իրարամերժ բեկորների: Իսկ այն ամենի համար, ինչ անում կամ չեն անում իշխանավորները, նրանց բոլոր անիմաստ, չկշռադատված քայլերի համար, գաղտնի մեղքերի ու ակնհայտ նախասիրությունների համար միշտ թանկ են վճարում կոնկրետ մարդիկ, ամբողջ ժողովուրդներ ու ազգեր՝ հաճախ ապրուստի ու կյանքի գնով, ավիշի ու արյան գնով...

Մինչև ե՞րբ...

Մինչև ե՞րբ հանդուրժենք գարշահոտ առաջնորդ-մումիաներով ծանրաբեռ կոմունիզմի սիզիֆյան սայլը:

Էդուարդ ԲԵԳԼԱՐՅԱՆ
«Ադրբեջան» համայնապատկերի նախկին բանտարկյալ